

մըտութեան ու հովանաւորութեան ղէպերը : նա թափով քեմ կը նետուի միմիայն Փրանս-գերմանական ընդհարումի մը պարագային , բայց նա չի պարտաւորուի միջամտել Եւրոպայի այլեւայլ կէտերում պայթելիք բախումներուն :

Արդպիսի որոշում մը ընդունելու էր Մեծ Բրիտանիոյ կառավարութիւնը , երբ ան կը գտնուէր Աշխատաւորական կուսակցութեան ձեռքում եւ երբ անոր գլուխ էր Ռամզէյ Մակդոնալտ . ընկերվարական պարագլուխը իր առաջին հոգսը ըրած էր՝ կազմակերպել միջադգային խաղաղութիւնը հաստատուն խորհուրդներու վրայ : 1924-ի սեպտեմբերին նա գնաց անձամբ Ժընէվ , Ազգերու Լիգայի տարեկան համագումարին . գնաց եւ Հերրիօ , Փրանսայի ղէմովկրատ նախարարապետը , եւ հոն , համաշխարհային պարլամենտի ամբիոնէն , ընկերվարական պրեմիերը ազգարարեց , որ Անգլիան միջազգային քաղաքականութեան իբրեւ հիմք կ'ընդունէ արբիտրաժը (իրաւաբարութիւն) , որ նոյնը պէտք է ընեն բոլոր միւս պետութիւնները , որ երբ միջազգային իրաւարար Ատենը արձակէ իր վճիռը ոեւէ պետութեան յարձակողական աքտերուն ղէմ , այդ վճիռը պէտք է յարգուի բոլոր ստորագրող պետութիւններու կողմէն եւ ամբողջ համաշխարհային կարծիքը պէտք է ծառանայ ընդդմ անիրաւ , յարձակուող կողմի . Մակդոնալտ յայտարարեց , որ Իրաւարար Ատենի վճիռները , որպէս զերազոյն արդարութեան պատգամներ , պէտք է պարտադրուին անիրաւ կողմին առանց բռնի միջոցներու գործադրութեան , բայց որ , ի հրակին , տնտեսական ու այլ ճնշումներ պէտք է կիրառուին եւ Անգլիան պատրաստ է իր նաւատորմը դնելու Ազգերու Դաշնակցութեան տրամադրութեան տակ՝ յարձակուող պետութիւնը պատժելու համար : Եւ երբ հանրօրէն կ'ընդունուի արբիտրաժի սկզբունքը , պետութիւնները ընդհանուր խորհրդակցութեամբ կը սկսին զինաքափ լինիլ , ոչ ի հարկէ , մէկէն ի մէկ , այլ կամաց-կամաց , աստիճանաբար եւ պատշաճ համեմատութեամբ , նայած իւրաքանչիւր երկրի աշխարհագրական ու այլ պայմաններուն :

Այս հիմնական գաղափարներով է , որ

խմբադրուեց — գլխաւորապէս անգլո-ֆրանսական գործակցութեամբ հռչակաւոր ժընէվեան պրոտոկոլը : Նոր դարագլուխ կը բացուէր միջազգային արեւնոտ յարաբերութիւններում մէջ , նոր աւետարան մըն էր , որ կը բերէր քաղմազարչար մարդկութեանը՝ ընկերվարական հզօր կուսակցութիւնը , որ առաջին անգամը իր ձեռքն առած բրիտանական աշխարհածաւալ կայսրութեան ղեկը , կը թողնէր իր ժխտական , քննադատական ընթացքը եւ կը դիմէր իր հայրենիքի եւ աշխարհի վերաշինութեան գործին : Մեծ էր խանդավառութիւնը Փարիզէն մինչեւ Վարչաւա . . .

Տարաբախտաբար , Ժընէվի պրոտոկոլը դեռ չվաւերացուած , ոչակցիան վրայ հասաւ Անգլիոյ մէջ — նպաստաւորուած ոուս բողշեւիզմի պրոպագանդէն — եւ ընկերվարական դահլիճը տապալուելով , երկրի ղեկը անցաւ Պահպանադոկաններուն , որոնք վրեժացին թաղել Ժընէվի համաձայնութիւնը : Թաղեցին , գիտնալով , որ կենտրոնական ու արեւելեան Եւրոպայի մէջ դեռ չատ կան առկախ մնացած լնդիւրներ , յղի ամէն տեսակ անակնկալներով :

Անգլիան կ'երաշխարհէ միմիայն Փրանսայի , Բելգիայի ու Գերմանիայի սահմաններու ապահովութիւնը , որ կը շօշափէ Մեծ Բրիտանիոյ անմիջական շահերը , իսկ կենտրոնական եւ արեւելեան Եւրոպայի խաղաղութեան հոգսը նա կը թողու Ազգերու Դաշնակցութեան :

Արդարեւ , վերջինի ընդունած համաձայնագրերի 10-րդ յօդուածը կ'ըսէ պարզ ու յստակ .

« Դաշնակցութեան անդամները կը պարտաւորուին յարգել անխախտ պահել , ընդդէմ ամէն արտաքին յարձակման , Դաշնակցութեան բոլոր անդամ-պետութիւններու հողային ամբողջութիւնը եւ ներկայ քաղաքական անկախութիւնը » :

Սակայն , տարաբախտաբար , Ազգերու Դաշնակցութիւնը , լինելով հանդերձ մեծ բարոյական ոյժ մը , խոստումնալի ապագայով , չի կարող , իր այժմեան կազմակերպութեամբ , ապահովել ոեւէ անդամ-պետութիւն մը՝ դրսի յարձակումներու ղէմ : Ժընէվի մեծ Հաստատութիւնը այն չէ , ինչ որ Ուիլսոնն էր երա-